*Հավելված*
*Հաստատված է*
*Հայաստանի Հանրապետության*
*կենտրոնական ընտրական հանձնաժողովի*
*2026 թվականի փետրվարի 9-ի թիվ 15-Ա որոշմամբ*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ 2026Թ.ՀՈՒՆԻՍԻ 7-ԻՆ ԿԱՅԱՆԱԼԻՔ ՀԵՐԹԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

## Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Ց ՈՒ Յ Ց

| Հ/Հ | Միջոցառման բովանդակություն | ՀՀ ԸՕ հոդված | Կատարման ժամկետ (ներառյալ) | Կատարող |
|---|---|---|---|---|
| 1 | Դիտորդների հավատարմագրման վերաբերյալ դիմումները՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքի միջոցով, Կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացվում են.<br>***ընտրություններ նշանակելու օրվանից հետո, սակայն ոչ ուշ, քան կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների ընտրական ցուցակների գրանցման համար սահմանված ժամկետի վերջին օրը*** | 31, մաս 2<br>ԿԸՀՈ N 3-Ն<br>21.01.2022 թ | 7.02.2026-ից մինչև 3.05.2026 | Միջազգային կազմակերպություններ, օտարերկրյա հասարակական կազմակերպություններ, Հայաստանի Հանրապետության հասարակական կազմակերպություններ և հիմնադրամներ |
| 2 | Քվեարկության օրը ընտրությունների և քվեարկության վերաբերյալ լուսաբանում իրականացնելու համար հավատարմագրման վերաբերյալ դիմումը և զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցիչների ցուցակը Կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացվում են.<br>***ընտրություններ նշանակելու օրվանից հետո, սակայն ոչ ուշ, քան քվեարկության օրվանից 10 օր առաջ*** | 31, մաս 8, պարբ 2 | 7.02.2026-ից մինչև 28.05.2026 | Լրատվական գործունեություն իրականացնող իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր հանդիսացող ֆիզիկական անձ |

| Հ/Հ | Միջոցառման բովանդակություն | ՀՀ ԸՕ հոդված | Կատարման ժամկետ (ներառյալ) | Կատարող |
|---|---|---|---|---|
| 3 | Կուսակցությունը, կուսակցությունների դաշինքն ընտրություններին մասնակցելու համար օգտահաշիվ ստանալու նպատակով էլեկտրոնային եղանակով դիմում Կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացնում է.<br>***ընտրությունների ժամանակացույցը ԿԸՀ պաշտոնական կայքում հրապարակվելուց հետո, բայց ոչ ուշ, քան գրանցման համար փաստաթղթերը ներկայացնելու համար սահմանված վերջնաժամկետը*** | 84, մաս 6<br>ԿԸՀՈ N 3-Ա,<br>31.01.2023թ | 9.02.2026-ից<br>23.04.2026 մինչև<br>ժամը 18:00 | Կուսակցություն,<br>կուսակցությունների<br>դաշինք |
| 4 | Ընտրողների թվի վերաբերյալ տեղեկանք՝ ըստ մարզերի և Երևան քաղաքի վարչական շրջանների, Կենտրոնական ընտրական հանձնաժողովին տրամադրվում է.<br>***ընտրություն նշանակելու վերաբերյալ Հանրապետության նախագահի հրամանագիրն ուժի մեջ մտնելուց հետո՝ 5-օրյա ժամկետում*** | 12, մաս 2,<br>պարբ. 1 | մինչև 12.02.2026 | Լիազոր մարմին |
| 5 | Հանրային տեսալսողական հեռարձակողի և հանրային լսողական հեռարձակողի վճարովի եթերաժամի մեկ րոպեի արժեքը հրապարակվում է.<br>***ընտրություններ նշանակելու մասին Հանրապետության նախագահի հրամանագիրն ուժի մեջ մտնելուց ոչ ուշ, քան 5 օր հետո***<br><br>***Ծանուցում*** *վճարովի եթերաժամի մեկ րոպեի արժեքը չի կարող գերազանցել ընտրությունների նշանակմանը նախորդող վերջին վեց ամսվա համար առևտրային գովազդի միջին արժեքի 50 տոկոսը, և որը մինչև նախընտրական քարոզչության ավարտը չի կարող փոփոխվել* | 20, մասեր 5 | մինչև 12.02.2026 | Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողով |

| Հ/Հ | Միջոցառման բովանդակություն | ՀՀ ԸՕ հոդված | Կատարման ժամկետ (ներառյալ) | Կատարող |
|---|---|---|---|---|
| 6 | Նախընտրական քարոզչություն իրականացնելու համար ընտրություններին մասնակցող կուսակցություններին, կուսակցությունների դաշինքներին եթերաժամ տրամադրող մասնավոր հիմունքներով հեռուստառադիոհեռարձակում իրականացնող տեսալսողական մեդիածառայություն մատուցողների կողմից իրենց վճարովի եթերաժամի մեկ րոպեի արժեքն իրենց եթերով հրապարակում են.<br>***ընտրություններ նշանակելու մասին Հանրապետության նախագահի հրամանագիրն ուժի մեջ մտնելուց ոչ ուշ, քան 5 օր հետո***<br><br>**Ծանուցում** *վճարովի եթերաժամի մեկ րոպեի արժեքը, որը չի կարող գերազանցել ընտրությունների նշանակմանը նախորդող վերջին 6 ամսվա համար առևտրային գովազդի միջին արժեքը, և որը մինչև նախընտրական քարոզչության ավարտը չի կարող փոփոխվել* | 20, մաս 6 | մինչև 12.02.2026 | Մասնավոր հիմունքներով հեռուստառադիոհեռարձակում, այդ թվում՝ կաբելային (մալուխային) ցանցով, արբանյակային կապով և վերգետնյա եթերային հեռարձակում իրականացնող տեսալսողական մեդիածառայություն մատուցողներ վերգետնյա եթերային հեռարձակում իրականացնող մյուս տեսալսողական մեդիածառայություն մատուցողներ,<br>ՀՌՀ |
| 7 | Նախընտրական քարոզչության ժամանակահատվածում տեսալսողական մեդիածառայություն մատուցողների կողմից նախընտրական քարոզչության ժամանակահատվածում ընտրություններին մասնակցող կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) համար հավասար պայմանների ապահովման գնահատման մեթոդաբանությունը հրապարակվում և Կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացվում է.<br>***ընտրություն նշանակելու մասին Հանրապետության նախագահի հրամանագիրն ուժի մեջ մտնելուց ոչ ուշ, քան 7 օր հետո*** | 20, մասեր 10, 11 | մինչև 14.02.2026 | Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողով |

| Հ/Հ | Միջոցառման բովանդակություն | ՀՀ ԸՕ հոդված | Կատարման ժամկետ (ներառյալ) | Կատարող |
|---|---|---|---|---|
| 8 | Ազգային ժողովի յուրաքանչյուր խմբակցություն վերահսկիչ-վերստուգիչ ծառայությունում Հայաստանի Հանրապետությունում աուդիտորի որակավորում ստացած ընտրական իրավունք ունեցող մեկ աուդիտոր կարող է նշանակել.<br>***ընտրությունները նշանակվելուց հետո` 10-օրյա ժամկետում*** | 29, մաս 3 | մինչև 17.02.2026 | Ազգային ժողովի խմբակցություններ |
| 9 | Նախընտրական քարոզչության ժամանակահատվածում ընտրություններին մասնակցող կուսակցություններին (կուսակցությունների դաշինքներին) տրամադրվող 5 քառակուսի մետրը գերազանցող մակերեսով վահանակների, ինչպես նաև մետրոպոլիտենի տարածքում և հասարակական տրանսպորտի կանգառներում տեղակայված վահանակների քանակի, մակերեսների, դրանց գտնվելու վայրերի և վարձավճարների վերաբերյալ տեղեկատվությունը Կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացվում է.<br>***ընտրությունները նշանակվելուց հետո` 10-օրյա ժամկետում*** | 21, մաս 6<br>ԿԸՀՈ N 21-Ն<br>27.03.2025թ | մինչև 17.02.2026 | Արտաքին գովազդային վահանակները տնօրինող կազմակերպություններ |
| 10 | Կուսակցություններին, կուսակցությունների դաշինքներին անվճար հիմունքներով տրամադրվող դահլիճների և այլ շինությունների ցանկը Կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացվում է.<br>***քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 70 օր առաջ*** | 19, մաս 3<br>ԿԸՀՈ N 208-Ն<br>26.08.2021թ. | մինչև 29.03.2026 | Մարզպետ,<br>Երևանի քաղաքապետ |
| 11 | Կուսակցությունները, կուսակցությունների դաշինքները գրանցման համար փաստաթղթերը Կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացնում են.<br>***քվեարկության օրվանից ոչ շուտ, քան 55, և ոչ ուշ, քան 45 օր առաջ` մինչև ժամը 18.00-ն*** | 103, մաս 3 | 13.04.2026 -<br>23.04.2026 մինչև ժամը 18:00 | Կուսակցության, կուսակցությունների դաշինքի լիազոր ներկայացուցիչ |

| Հ/Հ | Միջոցառման բովանդակություն | ՀՀ ԸՕ հոդված | Կատարման ժամկետ (ներառյալ) | Կատարող |
|---|---|---|---|---|
| 12 | Կուսակցությունները, կուսակցությունների դաշինքները 5 քառակուսի մետրը գերազանցող մակերեսով գովազդային վահանակներում քարոզչական պաստառներ տեղադրելու համար հայտերը Կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացնում են,<br>***քվեարկության օրվանից ոչ շուտ, քան 55, և ոչ ուշ, քան 45 օր առաջ՝ մինչև ժամը 18.00-ն*** | 21, մաս 6 | 13.04.2026 - 23.04.2026 մինչև ժամը 18:00 | Կուսակցության, կուսակցությունների դաշինքի լիազոր ներկայացուցիչ |
| 13 | Զորամասերում, ազգային անվտանգության և ոստիկանության զորքերում հաշվառված ընտրողների թվերը լիազոր մարմին և Կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացվում են.<br>***քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 50 օր առաջ*** | 10, մաս 9<br>ԿԸՀՈ N 15-Ն 27.03.2025թ. | մինչև 18.04.2026 | ՀՀ պաշտպանության նախարարություն,<br>ՀՀ ազգային անվտանգության ծառայություն,<br>ՀՀ ներքին գործերի նախարարություն |
| 14 | Հայաստանի Հանրապետության դիվանագիտական կամ հյուպատոսական ներկայացուցչություններում դիվանագիտական ծառայություն անցնող ընտրողների և նրանց հետ արտերկրում բնակվող ընտանիքի՝ ընտրելու իրավունք ունեցող անդամների, ինչպես նաև երկարատև ծառայողական գործուղման կամ ուսման մեջ գտնվող զինծառայողների և նրանց հետ արտերկրում բնակվող ընտանիքի՝ ընտրելու իրավունք ունեցող անդամների ցուցակը լիազոր մարմին ներկայացվում է.<br>***քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 50 օր առաջ*** | 62<br>ԿԸՀՈ N 32-Ն 17.06.2016թ. | մինչև 18.04.2026 | ՀՀ արտաքին գործերի նախարարություն,<br>ՀՀ պաշտպանության նախարարություն |
| 15 | Կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների ընտրական ցուցակների գրանցումը կատարվում է.<br>***քվեարկության օրվանից ոչ շուտ, քան 45, և ոչ ուշ, քան 35 օր առաջ՝ մինչև 18.00-ն*** | 103, մաս 4 | 23.04.2026-ից 3.05.2026 մինչև ժամը 18:00 | Կենտրոնական ընտրական հանձնաժողով |

| Հ/Հ | Միջոցառման բովանդակություն | ՀՀ ԸՕ հոդված | Կատարման ժամկետ (ներառյալ) | Կատարող |
|---|---|---|---|---|
| 16 | Ընտրություններին մասնակցող կուսակցություններին, կուսակցությունների դաշինքներին հերթական համարները Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից` վիճակահանությամբ տրամադրվում են.<br>***քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 35 օր առաջ*** | 85, մաս 2 | մինչև 3.05.2026 | Կենտրոնական ընտրական հանձնաժողով |
| 17 | 5 քառակուսի մետրը գերազանցող մակերեսով արտաքին գովազդային վահանակների վրա քարոզչական տպագիր և այլ նյութեր տեղադրելու իրավունքն ընտրություններին մասնակցող կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) միջև բաշխվում է.<br>***քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 35 օր առաջ*** | 21, մաս 6 | մինչև 3.05.2026 | Կենտրոնական ընտրական հանձնաժողով |
| 18 | Ընտրական տեղամասերը կազմավորվում են.<br>***քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 45 օր առաջ***<br><br>***Ծանուցում*** *Ընտրական տեղամասը կազմավորման պահին* ***չպետք է ունենա ավելի քան 2200 ընտրող*** | 16, մաս 1 | մինչև 23.04.2026 | Լիազոր մարմին` մասնակցությամբ համայնքի ղեկավարի և ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի անդամի |
| 19 | Ընտրողների թվի վերաբերյալ տեղեկանքը` ըստ մարզերի (Երևան քաղաքի վարչական շրջանների) և ընտրական տեղամասերի Կենտրոնական ընտրական հանձնաժողովին տրամադրվում է.<br>***ընտրական տեղամասերը կազմավորվելուց հետո` 2-օրյա ժամկետում*** | 12, մաս 2, պարբ. 3 | **մինչև 25.04.2026** | Լիազոր մարմին |
| 20 | Տեղամասային կենտրոնները սահմանվում և համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի հաստատմանն են ներկայացվում.<br>***քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 43 օր առաջ***<br><br>***Ծանուցում*** *Համայնքի ղեկավարը կազմում է տեղամասային կենտրոնների ցանկը` նշելով տեղամասային կենտրոնների գտնվելու վայրը, ինչպես նաև տեղամասային կենտրոնների և քվեարկության սենյակների բնութագրերը* | 18, մաս 2.1<br>ԿԸՀՈ N 17-Ն 24.03.2022թ | մինչև 25.04.2026 | Համայնքի ղեկավար |

| Հ/Հ | Միջոցառման բովանդակություն | ՀՀ ԸՕ հոդված | Կատարման ժամկետ (ներառյալ) | Կատարող |
|---|---|---|---|---|
| 21 | Քրեակատարողական հիմնարկներում տեղամասային կենտրոնները սահմանվում են.<br>***քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 43 օր առաջ*** | 17, մաս 4<br>18, մաս 1 | մինչև 25.04.2026 | Քրեակատարողական հիմնարկի պետ |
| 22 | Ընտրական տեղամասերի հերթական համարները սահմանվում և Կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացվում են.<br>***սահմանվելուց հետո երկօրյա ժամկետում*** | 52, մաս 1,<br>կետ 3 | մինչև 27.04.2026 | Ընտրատարածքային ընտրական հանձնաժողով |
| 23 | ՀՀ ընտրողների ռեգիստրը՝ ըստ ընտրական տեղամասերի, Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում որոնման հնարավորությամբ տեղադրելու համար՝ էլեկտրոնային եղանակով Կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացվում է.<br>***քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 41 օր առաջ*** | 9, մաս 4<br>ԿԸՀՈ N 32-Ն<br>17.06.2016թ. | մինչև 27.04.2026 | Լիազոր մարմին |
| 24 | ՀՀ ընտրողների ռեգիստրը՝ ըստ ընտրական տեղամասերի, Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում՝ որոնման հնարավորությամբ տեղադրվում է.<br>***քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 41 օր առաջ***<br><br>***Ծանուցում*** *Ընտրողների ցուցակում էլեկտրոնային եղանակով քվեարկող անձանց տվյալների դիմաց կատարվում է նշում՝ «Էլ.քվեարկություն»* | 9, մաս 4 | մինչև 27.04.2026 | Կենտրոնական ընտրական հանձնաժողով |
| 25 | Էլեկտրոնային եղանակով քվեարկող ընտրողների ցուցակը Կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացվում է.<br>***քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 41 օր առաջ*** | 62,<br>ԿԸՀՈ N 32-Ն<br>17.06.2016թ. | մինչև 27.04.2026 | Լիազոր մարմին |

| Հ/Հ | Միջոցառման բովանդակություն | ՀՀ ԸՕ հոդված | Կատարման ժամկետ (ներառյալ) | Կատարող |
|---|---|---|---|---|
| 26 | Համայնքի տարածքում քարոզչական պաստառ, քարոզչական տպագիր և այլ նյութեր տեղադրելու համար անվճար վահանակներ առանձնացնելու մասին որոշումն ընդունվում է.<br>***նախընտրական քարոզչությունն սկսվելուց 10 օր առաջ***<br>***Ծանուցում*** *Քարոզչական պաստառ, քարոզչական տպագիր և այլ նյութեր տեղադրելու համար համայնքի ղեկավարի առանձնացրած վահանակները պետք է լինեն կիրառելի և տեղակայված լինեն հանրության համար տեսանելի ու հնարավորինս բանուկ վայրերում* | 21, մաս 3 | **մինչև 28.04.2026** | Համայնքի ղեկավար |
| 27 | Տեղաշարժման (հենաշարժական) դժվարություններ ունեցող ընտրողների համար մատչելի ընտրական տեղամասերի ցանկը հրապարակվում է.<br>***ոչ ուշ, քան քվեարկության օրվանից 40 օր առաջ*** | 10, մաս 3.1 | մինչև 28.04.2026 | Կենտրոնական ընտրական հանձնաժողով |
| 28 | Ընտրողների նախնական ցուցակը տեղամասային կենտրոնի տարածքը տիրապետողին տրամադրվում է.<br>***քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 40 օր առաջ*** | 12, մաս 1 | մինչև 28.04.2026 | Լիազոր մարմին |
| 29 | Ընտրողների ցնախնական ցուցակը` ըստ ընտրական տեղամասերի, ներբեռնելու հնարավորությամբ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում տեղադրվում է.<br>***քվեարկության օրվանից 40 օր առաջ*** | 13, մաս 2 | 28.04.2026-ին | Կենտրոնական ընտրական հանձնաժողով |
| 30 | Ընտրողների նախնական ցուցակը` ըստ ընտրական տեղամասերի, ներբեռնելու հնարավորությամբ Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության համացանցային կայքում տեղադրվում է.<br>***քվեարկության օրվանից 40 օր առաջ*** | 13, մաս 2 | 28.04.2026-ին | Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարություն |

| Հ/Հ | Միջոցառման բովանդակություն | ՀՀ ԸՕ հոդված | Կատարման ժամկետ (ներառյալ) | Կատարող |
|---|---|---|---|---|
| 31 | Ընտրողների ցուցակը տեղամասային կենտրոնում՝ բոլորի համար տեսանելի տեղում փակցվում է.<br>***քվեարկության օրվանից 40 օր առաջ*** | 13, մաս 3 | 28.04.2026-ին | Տեղամասային կենտրոնի տարածքը տիրապետող |
| 32 | Էլեկտրոնային եղանակով քվեարկող ընտրողների ցուցակը Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում տեղադրվում է.<br>***ցուցակը ստանալու օրվանից 2 օրվա ընթացքում*** | 62,<br>ԿԸՀՈ N 32-Ն<br>17.06.2016թ. | մինչև 29.04.2026 | Կենտրոնական ընտրական հանձնաժողով |
| 33 | **4 000** և ավելի ընտրող ունեցող համայնքի դեպքում՝ քարոզչական պաստառ, քարոզչական տպագիր և այլ նյութեր տեղադրելու համար անվճար վահանակներ առանձնացնելու մասին  համայնքի ղեկավարի որոշումը Կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացվում է.<br>***որոշումն ընդունելուց հետո՝ եռօրյա ժամկետում*** | 21, մաս 4 | **մինչև 1.05.2026** | Երևանի քաղաքապետ, Համայնքի ղեկավար |
| 34 | Կուսակցություններին, կուսակցությունների դաշինքներին հանրային հեռարձակողների տեսալսողական հաղորդումներից անվճար և վճարովի եթերաժամ տրամադրելու կարգը և ժամանակացույցը սահմանվում է.<br>***ընտրական ցուցակների գրանցման համար սահմանված ժամկետի ավարտից հետո՝ հաջորդ օրը*** | 20, մաս 2<br>93, մաս 1 | 4.05.2026-ին | Կենտրոնական ընտրական հանձնաժողով |
| 35 | Կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների **ընտրական ցուցակները** Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում հրապարակվում են.<br>***ընտրական ցուցակների գրանցման համար սահմանված ժամկետն ավարտվելուց հետո՝ եռօրյա ժամկետում*** | 85, մաս 3 | մինչև 6.05.2026 | Կենտրոնական ընտրական հանձնաժողով |

| Հ/Հ | Միջոցառման բովանդակություն | ՀՀ ԸՕ հոդված | Կատարման ժամկետ (ներառյալ) | Կատարող |
|---|---|---|---|---|
| 36 | Կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների **նախընտրական ծրագրերը** Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում հրապարակվում են.<br>***ընտրական ցուցակների գրանցման համար սահմանված ժամկետն ավարտվելուց հետո՝ եռօրյա ժամկետում*** | 85, մաս 3 | մինչև 6.05.2026 | Կենտրոնական ընտրական հանձնաժողով |
| 37 | Ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների կազմում ընդգրկված կուսակցությունների բանկային հաշիվների ֆինանսական միջոցների մնացորդի, մուտքերի և ելքերի վերաբերյալ տվյալները համապատասխան բանկերը **Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով** ներկայացնում են.<br>***ընտրական ցուցակների գրանցման համար սահմանված ժամկետի ավարտից հետո՝ մինչև քվեարկությունից հետո՝ երրորդ օրը՝ 3 աշխատանքային օրը մեկ***<br><br>***Ծանուցում*** *Համապատասխան բանկերի կողմից ներկայացված՝ ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների կազմում ընդգրկված կուսակցությունների բանկային հաշիվների ֆինանսական միջոցների մնացորդի, մուտքերի և ելքերի վերաբերյալ տվյալները Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովն ամփոփում է, կազմում է ամփոփ տեղեկանք և տեղադրում Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի համացանցային կայքում* | 26, մաս 10 | 7.05.2026-ից սկսած՝ երեք աշխատանքային օրը մեկ | Ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների կազմում ընդգրկված կուսակցությունների բանկային հաշիվներ բացած առևտրային բանկեր |
| 38 | Էլեկտրոնային եղանակով քվեարկող ընտրողների թվին համապատասխան անհատական ծածկագրեր պարունակող ծրարներն ընտրողներին ուղարկելու համար ՀՀ արտաքին գործերի նախարարությանը, ՀՀ պաշտպանության նախարարությանը տրամադրվում են.<br>***Էլեկտրոնային եղանակով քվեարկող ընտրողների ցուցակը ստանալուց ոչ ուշ, քան 10 օր հետո*** | ԿԸՀՈ N 32-Ն 17.06.2016թ. | մինչև 7.05.2026 | Կենտրոնական ընտրական հանձնաժողով |

| Հ/Հ | Միջոցառման բովանդակություն | ՀՀ ԸՕ հոդված | Կատարման ժամկետ (ներառյալ) | Կատարող |
|---|---|---|---|---|
| 39 | Տեղամասային ընտրական հանձնաժողովների նախագահների և քարտուղարների պաշտոնների բաշխումը` ըստ ընտրական տեղամասերի կատարվում է.<br>***քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 30 օր առաջ*** | 44, մաս 5<br>ԿԸՀՈ N 138-Ն 22.11.2016թ. | մինչև 8.05.2026 | Կենտրոնական ընտրական հանձնաժողով |
| 40 | Ընտրություններին մասնակցող կուսակցությունները, կուսակցությունների դաշինքները Երևանում և հանրապետության բոլոր մարզերում մասնաճյուղ ունեցող որևէ առևտրային բանկում ***պարտավոր են բացել նախընտրական հիմնադրամ .***<br>***ընտրական ցուցակը գրանցելու վերաբերյալ որոշում ընդունվելուց հետո` 5 օրվա ընթացքում*** | 26, մաս 1, պարբ. 1 | մինչև 8.05.2026, որը վերջնաժամկետն է | Ընտրություններին մասնակցող կուսակցություններ, կուսակցությունների դաշինքներ |
| 41 | ՀՀ ընտրողների ռեգիստրում ընդգրկված ընտրողների ընդհանուր թիվը` նշելով նաև ըստ գտնվելու վայրի ընտրողների, նախընտրած վայրի ընտրողների և հաշվառում չունեցող ընտրողների թվերը հրապարակվում են.<br>***քվեարկության օրվանից առաջ` 30-րդ օրը*** | 8, մաս 7 | 8.05.2026-ին | Լիազոր մարմին |
| 42 | Նախընտրական քարոզչության ժամանակահատվածը սկսվում է ***ընտրական ցուցակների գրանցման համար սահմանված ժամկետի վերջին օրվան հաջորդող 5-րդ օրը, ավարտվում` քվեարկության օրվանից 1 օր առաջ*** | 19, մաս 1 | 8.05.2026 - 5.06.2026 մինչև ժամը 24:00 | Ընտրողներ, պատգամավորի թեկնածուներ, կուսակցություններ, կուսակցությունների դաշինքներ |

| Հ/Հ | Միջոցառման բովանդակություն | ՀՀ ԸՕ հոդված | Կատարման ժամկետ (ներառյալ) | Կատարող |
|---|---|---|---|---|
| 43 | Տեղամասային ընտրական հանձնաժողովում անդամներ նշանակելու մասին հայտերը Կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացվում են.<br>***քվեարկության օրվանից ոչ շուտ, քան 30, և ոչ ուշ, քան 25 օր առաջ՝ մինչև ժամը 18.00-ն*** | 44, մաս 6 | 8.05.2026-ից 13.05.2026 մինչև ժամը 18:00 | Աժ խմբակցություն ունեցող կուսակցություններ (կուսակցությունների դաշինքներ), Ընտրատարածքային ընտրական հանձնաժողով |
| 44 | Կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների նախընտրական հիմնադրամների ֆինանսական մուտքերի և ելքերի վերաբերյալ տեղեկանք վերահսկիչ-վերստուգիչ ծառայություն ներկայացվում է.<br>***ընտրական ցուցակների գրանցման համար սահմանված ժամկետի ավարտից 5 օր հետո՝ 3 աշխատանքային օրը մեկ***<br><br>***Ծանուցում*** *Համապատասխան բանկերի կողմից ներկայացված՝ կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների նախընտրական հիմնադրամների ֆինանսական մուտքերի և ելքերի վերաբերյալ տվյալները Վերահսկիչ-վերստուգիչ ծառայությունն ամփոփում է, կազմում է ամփոփ տեղեկանք, որը տեղադրվում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում* | 26, մաս 8 | 8.05.2026-ից սկսած երեք աշխատանքային օրը մեկ | Նախընտրական հիմնադրամ ձևավորելու նպատակով ժամանակավոր հատուկ հաշիվներ բացած առևտրային բանկեր |
| 45 | Կուսակցության, կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակներում ընդգրկված պատգամավորի թեկնածուներն իրենց գույքի և եկամուտների մասին հայտարարագիր Կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացնում են.<br>***գրանցման համար սահմանված ժամկետի ավարտից հետո՝ 10 օրվա ընթացքում*** | 8, մաս 5<br>ԿԸՀՈ N 31-Ն 27.03.2025թ. | մինչև 13.05.2026 | Պատգամավորի թեկնածուներ |

| Հ/Հ | Միջոցառման բովանդակություն | ՀՀ ԸՕ հոդված | Կատարման ժամկետ (ներառյալ) | Կատարող |
|---|---|---|---|---|
| 46 | Կուսակցությունները, կուսակցությունների դաշինքում ընդգրկված կուսակցությունները՝ կուսակցության գույքի և եկամուտների մասին հայտարարագիր Կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացնում են. ***գրանցման համար սահմանված ժամկետի ավարտից հետո՝ 10 օրվա ընթացքում*** | 8, մաս 5 ԿԸՀՈ N 209-Ն 26.08.2021թ | մինչև 13.05.2026 | Կուսակցության, կուսակցությունների դաշինքի լիազոր ներկայացուցիչ |
| 47 | Տեղամասային ընտրական հանձնաժողովի առաջին նիստը տեղամասային կենտրոնում հրավիրվում է. ***կազմավորման օրվանից հետո՝ 3-րդ օրը, ժամը՝12.00-ին*** | 44, մաս 7 | 16.05.2026 ժամը 12:00-ին | Տեղամասային ընտրական հանձնաժողով |
| 48 | Կուսակցությունները, կուսակցությունների դաշինքներն իրենց նախընտրական հիմնադրամներ կատարված մուծումների և դրանց օգտագործման վերաբերյալ հայտարարագիրը վերահսկիչ-վերստուգիչ ծառայություն ներկայացնում են. ***նախընտրական քարոզչությունն սկսվելուց հետո՝10-րդ օրը*** | 28, մաս 1, ԿԸՀՈ N 18-Ն 27.03.2025թ | 17.05.2026 | Կուսակցություններ, կուսակցությունների դաշինքներ |
| 49 | Տեսալսողական մեդիածառայություն մատուցողների կողմից նախընտրական քարոզչության ժամանակահատվածում նախընտրական քարոզչության համար սահմանված  կարգի պահպանման վերաբերյալ մշտադիտարկման արդյունքները և Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի եզրակացությունը հրապարակվում և Կենտրոնական ընտրական հանձնաժողով  ներկայացնում են. ***նախընտրական քարոզչությունն սկսվելուց հետո՝ 10-րդ օրը*** | 20, մաս 12, պարբ 1 | 17.05.2026 | Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողով |

| Հ/Հ | Միջոցառման բովանդակություն | ՀՀ ԸՕ հոդված | Կատարման ժամկետ (ներառյալ) | Կատարող |
|---|---|---|---|---|
| 50 | ՀՀ ընտրողների ռեգիստրում ընդգրկված ընտրողների ընդհանուր թիվը՝ նշելով նաև ըստ գտնվելու վայրի ընտրողների, նախընտրած վայրի ընտրողների և հաշվառում չունեցող ընտրողների թվերը հրապարակվում են.<br>***քվեարկության օրվանից առաջ՝ 20-րդ օրը*** | 8, մաս 7 | 18.05.2026 | Լիազոր մարմին |
| 51 | Նախընտրական հիմնադրամներ կատարված մուծումների և դրանց օգտագործման վերաբերյալ հայտարարագրերը Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում տեղադրվում են.<br>***հայտարարագրերը ներկայացվելուց հետո՝ եռօրյա ժամկետում*** | 28, մաս 4 | մինչև 20.05.2026-ը, 30.05.2026-ը և 13.06.2026 | Կենտրոնական ընտրական հանձնաժողով |
| 52 | Հայաստանի Հանրապետությունում գրանցված հասարակական կազմակերպության կամ հիմնադրամի հավատարմագրած դիտորդների ցանկում Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն չունեցող անձանց վերաբերյալ փոփոխություններ (լրացումներ) կարող է իրականացվել.<br>***ոչ ուշ, քան քվեարկության օրվանից 15 օր առաջ*** | 31, մաս 2, պարբ. 1<br>ԿԸՀՈ N 3-Ն 21.01.2022թ. | մինչև 23.05.2026 | Հայաստանի Հանրապետության հասարակական կազմակերպություններ և հիմնադրամներ |
| 53 | Զորամասերում, ազգային անվտանգության և ոստիկանության զորքերում հաշվառված ընտրողների թվերը լիազոր մարմին և Կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացվում են.<br>***քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 15 օր առաջ*** | 10, մաս 9<br>ԿԸՀՈ N 15-Ն 27.03.2025թ. | մինչև 23.05.2026 | ՀՀ պաշտպանության նախարարություն,<br>ՀՀ ազգային անվտանգության ծառայություն,<br>ՀՀ ներքին գործերի նախարարություն |
| 54 | Քրեակատարողական հիմնարկում հաշվառված ընտրողների թիվը Կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացվում է.<br>***քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 15 օր առաջ*** | 10, մաս 11<br>ԿԸՀՈ N 128-Ն 09.11.2016թ. | մինչև 23.05.2026 | Քրեակատարողական հիմնարկի պետ |

| Հ/Հ | Միջոցառման բովանդակություն | ՀՀ ԸՕ հոդված | Կատարման ժամկետ (ներառյալ) | Կատարող |
|---|---|---|---|---|
| 55 | Ընտրողների թվի վերաբերյալ տեղեկանք՝ ըստ մարզերի (Երևան քաղաքի վարչական շրջանների) և ընտրական տեղամասերի Կենտրոնական ընտրական հանձնաժողովին տրամադրվում է.<br>***քվեարկության օրվանից 15 օր առաջ*** | 12, մաս 2, պարբ. 3 | 23.05.2026-ին | Լիազոր մարմին |
| 56 | Տեղամասային ընտրական հանձնաժողովների անդամներն իրենց նշանակող կուսակցությանը կամ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահին, իսկ տեխնիկական սարքավորումն սպասարկող մասնագետը ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահին կարող է ներկայացնի դիմում ՝ ըստ հաշվառման վայրի ընտրողների ցուցակից ժամանակավորապես դուրս գալու և ըստ գտնվելու վայրի ընտրական տեղամասի ընտրողների ցուցակում ընդգրկվելու մասին.<br>***քվեարկության օրվանից առնվազն 14 օր առաջ*** | 10, մաս 4 ԿԸՀՈ N 11-Ն 27.03.2025թ. | մինչև 24.05.2026 | Տեղամասային ընտրական հանձնաժողովների անդամներ, տեխնիկական սարքավորումն սպասարկող մասնագետներ |
| 57 | Կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների նախընտրական հիմնադրամներ  կատարված մուծումների և դրանց օգտագործման վերաբերյալ հայտարարագրերի ստուգման արդյունքներով վերահսկիչ-վերստուգիչ ծառայության եզրակացությունը կազմվում և Կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացվում է.<br>***հայտարարագրերը ստանալուց հետո՝ 7 օրվա ընթացքում*** | 29, մաս 5 | մինչև 24.05.2026-ը, 3.06.2026-ը և 13.06.2026 | Վերահսկիչ-վերստուգիչ ծառայություն |

| Հ/Հ | Միջոցառման բովանդակություն | ՀՀ ԸՕ հոդված | Կատարման ժամկետ (ներառյալ) | Կատարող |
|---|---|---|---|---|
| 58 | Ըստ հաշվառման վայրի ընտրողների ցուցակից ժամանակավորապես դուրս գալու և ըստ գտնվելու վայրի ընտրական տեղամասի ընտրողների ցուցակում ավելացվելու մասին դիմում լիազոր մարմնի կամ նրա համապատասխան ստորաբաժանման ղեկավարին ներկայացնում են.<br>***քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 12 օր առաջ՝ մինչև ժամը 14:00-ն***<br><br>***Ծանուցում*** Դիմումը կարող է ներկայացվել էլեկտրոնային կամ թղթային եղանակով: Էլեկտրոնային դիմումներն ապահովվում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ: Այլ անձի անունից դիմում ներկայացնելու դեպքում դիմումատուն պարտավոր է ներկայացնել նոտարական վավերացմամբ հաստատված լիազորագիր | 10, մաս 3<br>ԿԸՀՈ N 11-Ն<br>27.03.2025թ | մինչև 26.05.2026<br>մինչև ժամը 14:00-ն | Ընտրողներ,<br>Լիազոր մարմին |
| 59 | Տեղաշարժման (հենաշարժական) դժվարություններ ունեցող ընտրողները՝ ըստ հաշվառման վայրի ընտրողների ցուցակից ժամանակավորապես դուրս գալու և ըստ իրենց նախընտրած վայրի մատչելի ընտրական տեղամասի ընտրողների ցուցակում ընդգրկվելու մասին դիմում լիազոր մարմին կարող են ներկայացնել՝<br>***քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 12 օր առաջ՝ մինչև ժամը՝ 14:00-ն***<br><br>***Ծանուցում*** *Դիմումը կարող է ներկայացվել էլեկտրոնային կամ թղթային եղանակով: Տեղաշարժման (հենաշարժական) դժվարություններ ունեցող անձի անունից դիմում ներկայացնելու դեպքում՝ դիմումատուն պարտավոր է ներկայացնել նոտարական վավերացմամբ հաստատված լիազորագիր* | 10, մաս 3.1<br>ԿԸՀՈ N 11-Ն<br>27.03.2025թ | մինչև 26.05.2026<br>մինչև ժամը՝ 14:00-ն | Տեղաշարժման (հենաշարժական) դժվարություններ ունեցող ընտրողներ |

| Հ/Հ | Միջոցառման բովանդակություն | ՀՀ ԸՕ հոդված | Կատարման ժամկետ (ներառյալ) | Կատարող |
|---|---|---|---|---|
| 60 | Տեղամասային ընտրական հանձնաժողովների անդամները և տեխնիկական սարքավորումն սպասարկող մասնագետները՝ ըստ հաշվառման վայրի ընտրողների ցուցակից ժամանակավորապես դուրս գալու և ըստ գտնվելու վայրի ընտրական տեղամասի ընտրողների ցուցակում ընդգրկվելու մասին դիմումն անձամբ կամ իրենց նշանակողի միջոցով լիազոր մարմին կարող են ներկայացնել.<br>***քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 12 օր առաջ՝ մինչև ժամը 14.00-ն*** | 10, մաս 4<br>ԿԸՀՈ N 11-Ն 27.03.2025թ | մինչև 26.05.2026 մինչև ժամը 14:00-ն | Տեղամասային ընտրական հանձնաժողովների անդամ, տեխնիկական սարքավորումն սպասարկող մասնագետ, ԱԺ-ում խմբակցություն ունեցող կուսակցություն, կուսակցությունների դաշինքներ, ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահ |
| 61 | Հայաստանի Հանրապետությունում հաշվառում չունեցող ընտրողները քվեարկությանը մասնակցելու համար ընտրողների ցուցակում ժամանակավորապես ընդգրկվելու մասին դիմում լիազոր մարմին ներկայացնում են.<br>***քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 12 օր առաջ՝ մինչև ժամը 14.00-ն*** | 10, մաս 5<br>ԿԸՀՈ N 11-Ն 27.03.2025թ | մինչև 26.05.2026 մինչև ժամը 14:00-ն | Ընտրողներ, Լիազոր մարմին |
| 62 | Քվեարկության օրն ընտրական տեղամասեր գործուղվող ոստիկանության ծառայողների ցուցակը կազմվում և լիազոր մարմին է ներկայացվում.<br>***քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 12 օր առաջ՝ մինչև ժամը 14.00-ն*** | 10, մաս 6 | մինչև 26.05.2026 մինչև ժամը 14:00-ն | ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանություն |

| Հ/Հ | Միջոցառման բովանդակություն | ՀՀ ԸՕ հոդված | Կատարման ժամկետ (ներառյալ) | Կատարող |
|---|---|---|---|---|
| 63 | Ստացիոնար բուժում իրականացնող բժշկական հաստատության ղեկավարը ստացիոնար բուժման մեջ գտնվող և քվեարկության օրը տեղամասային կենտրոն ինքնուրույն ներկայանալու հնարավորություն չունեցող, ստացիոնար բժշկական հաստատությունում քվեարկությանը մասնակցել ցանկացող ընտրողների ցուցակը լիազոր մարմին ներկայացնում է.<br>***քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 12 օր առաջ՝ մինչև ժամը 14.00-ն*** | 10, մաս 7, պարբ. 1 | մինչև 26.05.2026 մինչև ժամը 14:00-ն | Ստացիոնար բուժում իրականացնող բժշկական հաստատության ղեկավար |
| 64 | Ընտրողների ցուցակներում տեղ գտած, այդ թվում՝ դիմողի անձին չվերաբերող անճշտությունները վերացնելու մասին դիմում լիազոր մարմին ներկայացվում է.<br>***քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 12 օր առաջ*** | 14, մաս 1 | մինչև 26.05.2026 | Ընտրողներ,<br>Լիազոր մարմին |
| 65 | Տեսալսողական մեդիածառայություն մատուցողների կողմից նախընտրական քարոզչության ժամանակահատվածում նախընտրական քարոզչության համար սահմանված  կարգի պահպանման վերաբերյալ մշտադիտարկման արդյունքները և Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի եզրակացությունը հրապարակվում և Կենտրոնական ընտրական հանձնաժողով  ներկայացվում են.<br>***նախընտրական քարոզչությունն սկսվելուց հետո՝ 20-րդ օրը*** | 20, մաս 12 | 27.05.2026-ին | Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողով |
| 66 | Կուսակցությունները, կուսակցությունների դաշինքերն իրենց նախընտրական հիմնադրամներ կատարված մուծումների և դրանց օգտագործման վերաբերյալ հայտարարագիրը վերահսկիչ-վերստուգիչ ծառայություն ներկայացնում են.<br>***նախընտրական քարոզչությունն սկսվելուց հետո՝ 20-րդ օրը*** | 28, մաս 1 | 27.05.2026-ին | Կուսակցություններ, կուսակցությունների դաշինքներ |

| Հ/Հ | Միջոցառման բովանդակություն | ՀՀ ԸՕ հոդված | Կատարման ժամկետ (ներառյալ) | Կատարող |
|---|---|---|---|---|
| 67 | Թեկնածուները, կուսակցությունները, կուսակցությունների դաշինքները կամ դաշինքի անդամ կուսակցություններն ինքնաբացարկի մասին դիմում կարող են ներկայացնել.<br>***քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 10 օր առաջ՝ մինչև ժամը 18.00-ն*** | 90, մասեր 3, 4 | մինչև 28.05.2026<br>մինչև ժամը 18:00 | Թեկնածուներ, կուսակցություններ, կուսակցությունների դաշինքներ, դաշինքի անդամ կուսակցություններ |
| 68 | ՀՀ ընտրողների ռեգիստրում ընդգրկված ընտրողների ընդհանուր թիվը՝ նշելով նաև ըստ գտնվելու վայրի ընտրողների, նախընտրած վայրի ընտրողների և հաշվառում չունեցող ընտրողների թվերը հրապարակվում են.<br>***քվեարկության օրվանից առաջ՝10-րդ օրը*** | 8, մաս 7 | 28.05.2026-ին | Լիազոր մարմին |
